Հաստատված է
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի
ավագանու 2020 թվականի ապրիլի 26-ի
N 23-Ա որոշման

ՀԱՅՏ
Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն
ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	Կապտաժի և ջրագծի կառուցում՝ Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրում
Մարզ	ՀՀ Սյունիքի մարզ
Համայնքը /համայնքները	Գորիս խոշորացված համայնք: Բնակավայրը՝ Վերիշեն
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	Վերիշեն բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից 243 կմ, մարզկենտրոնից՝ 68 կմ: Հեռավորությունը Գորիսից՝ 3 կմ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1600մ:
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	Բնակչություն՝ 2314
Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի	Գորիս համայնքը սահմանամերձ է
Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիճ տեղեկատվություն	Վերիշեն բնակավայրն ունի 97% լուսավորության ծածկույթ: Բնակավայրը գազաֆիկացված է՝ 64%, ջրամատակարարումը՝ 87%, կատարվում է կանոնավոր աղբահանություն: Գործում է ներհամայնքային տրանսպորտ: Բնակավայրի հրատապ խնդիրը խմելու ջրի հարցն է:
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Վերիշեն բնակավայրի խմելու ջրի հարցը համարվում է համայնքի ամենահրատապ լուծում պահանջող խնդիրներից մեկը: Բնակավայրի ծորակներից հոսող ջուրը պիտանի չէ խմելու համար և բնակչության առողջության ու տարատեսակ հիվանդությունների բռնկումների համար ստեղծված իրավիճակը խիստ ռիսկային է: Խմելու ջրի հարցը բնակավայրի գերակա խնդիրն է և ուղղակիորեն ազդում է բնակիչների կենսակերպի, բնակավայրի զարգացման վրա: Ոչ միայն ջրի աղտոտվածության, նաև քանակի խնդիր է առկա բնակավայրի

	ջուրը բերվում է հարևան Ակներից, որի քանակը քիչ է և ներքին ցանցի անմխիթար վիճակի պատճառով՝ օգտագործման համար ոչ պիտանի: Մինչդեռ, Ակների Մթնաձոր և Բաբուռի քերծ անվանյալ տարածքներում ջրի առատ պաշարները կարող են ոչ միայն բավարարել Ակներ ու Վերիշեն բնակավայրերին նաև Գորիս քաղաքին: Ստորգետնյա ջրերի և աղբյուրների որակը բավարար է՝ դրանք որպես խմելու ջուր օգտագործելու համար, ընդամենը պահանջվում է քլորացում: Անհրաժեշտ է բնական աղբյուրներից բնակավայր մղվող ջրի քանակը ավելացնել՝ կենսական նշանակության խնդրի լուծման, ջրօգտագործման հարցը կարգավորելու համար: Ծրագրի շրջանակներում պլանավորվում է կառուցել ջրահավաք 4 կապտաժ և ջրագիծ: Գյուղի խմելու ջրամատակարարման համակարգի վերակառուցման արդյունքում գյուղի ամբողջ բնակչությունը իրենց տներում կունենա կանոնավոր ջրամատակարարում: Կապտաժների կառուցման շնորհիվ բնակավայրում կակտիվանան տնտեսական հնարավորությունները, որը մեծապես կխթանի զբոսաշրջությունը: Այսօր արդեն չափազանց գրավիչ դարձած Վերիշենում հիմնանորոգվում են բնակավայրի մշակույթի տան հարակից տարածքները, մշակույթի տանը ստեղծվում է արվեստների կենտրոն: Մշակույթի տան հարակից տարածքում է գտնվում 4-րդ դարի եկեղեցի՝ կառուցված հեթանոսական տաճարի վրա և այլ արժեքավոր մշակութային ժառանգություններ, որոնք բազմաթիվ զբոսաշրջիկներ են բերում բնակավայր: Թեև տարեկան բազմաթիվ զբոսաշրջիկներ են գալիս բնակավայր, սակայն ջրի պատճառով՝ ենթակառուցվածքները չեն զարգանում: Բնակավայրում չկան հյուրատներ, սննդի սպասարկման օբյեկտներ, մինչդեռ Գորիս եկող զբոսաշրջիկների հսկայական հոսքը հենց դեպի Վերիշեն բնակավայր է: Ուստի խմելու ջրի հարցի լուծման արդյունքում, բնակավայրը հավակնում է դառնալ համայնքի առաջընթաց տեմպերով զարգացող բնակավայրը:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրա-կանացման նպատակին	➢ Լուծվել է Վերիշեն բնակավայրի համար կենսական նշանակություն ունեցող խմելու ջրի հարցը ➢ Բնակավայրում տնտեսական զարգացման հնարավորություններ են ստեղծվել ➢ Ստեղծվել են զբոսաշրջային նոր ենթակառուցվածքներ ➢ Բնակավայր այցելող զբոսաշրջիկների զգալի մասը սկսել է գիշերել բնակավայրում, օգտվել զբոսարջային ոլորտը սպասարկող ծառայություններից: ➢ Նոր ներդրումների հնարավորություններ են ստեղծվել

Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	• Նախագծանախահաշվային աշխատանքների իրականացում • Գնման գործընթացի կազմակերպում ❖ Շինարարական աշխատանքների կազմակերպում ❖ Կապտաժների կառուցում/ 4 հատ ❖ Դրենաժային ջրհավաքի կառուցում 1հատ ❖ խողովակաշարի անցկացում 5500գծմ ❖ Կապտաժի շահագործում և համայնքի բյուջեով պահպանման ծախսերի նախատեսում
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում	Ծրագրային ենթակառուցվածքները համայնքային սեփականություն են և կընդգրկվեն հիմնական միջոցների հաշվեկշռում
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	Շահառուների քանակը ▪ Թվով 2314 բնակիչների խմելու ջրի հարցը վերջնականապես կլուծվի ▪ Բնակավայր այցելող հազարավոր զբոսաշրջիկներին հյուրընկալելու և զբոսաշրջային ծառայություններ առաջարկելու հնարավորություններ կստեղծվեն: ▪ Ստեղծվել են հյուրատներ, հյուրանոցներ, սննդի սպասարկման օբյեկտներ ▪ Բնակավայրում նոր աշխատատեղեր է ստեղծվել
Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղեր	Ծրագրի իրականացման ընթացքում ✓ Բնակավայրում ստեղծվել են 2 հյուրատոն, 1 սննդի սպասարկման կետ ✓ Շինաշխատանքներում կներգրավվեն 32-ից ավել աշխատողներ ✓ Կստեղծվեն նոր բիզնեսներ՝ զբոսաշրջության ոլորտը սպասարկող ✓ Ներդրումային ծրագրեր կմեկնարկեն
Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը	Նախորդ տարվա բյուջեն՝ 1 100 330 000 ՀՀ դրամ . ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով: Պլան | Փաստացի | Տոկոս

Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտները այդ թվում՝	1 100 330 000	1 136 595 216	103
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից	906 179 600	942 871 044	104
- Սեփական եկամուտներ	237 601 500	275 493 844	116
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	194 150 400	193 724 172	99.8
Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր, որից	1 100 330 000	1 118 326 150	101.5
- Վարչական բյուջեի ծախսեր	906 179 600	804 688 844	88.8
- Ֆոնդային բյուջեի ծախսեր	194 150 400	176 560 250	90.9
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից			
- Ճանապարհաշինություն		104 100 595	
- շրջակա միջ. պաշտպան.		55 455 155	
- ջրամատակարարում		1 673 000	
- գյուղատնտեսություն		15 331 500	

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

2020թ.- բյուջեն**1 178 027 500** ՀՀ դրամ ,

Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:

	Պլան
Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում այդ թվում՝	1 178 027 500
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից	1 018 013 200
- Սեփական եկամուտներ	253 659 700
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	160 014 300
Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր, որից	1 178 027 500
- Վարչական բյուջեի ծախսեր	1 018 013 200

	- Ֆոնդային բյուջեի ծախսեր	160 014 300
	Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, որից	160 014 300
	- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	2 000 000
	- Ճանապարհային տրանսպորտ	89 014 300
	- Շրջակա միջավայրի պաշտպանություն	48 000 000
	- Զրամատակարարում	18 000 000
	- Բնակարանային շինարարություն	3 000 000
Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով	***Համայնքի բյուջեի ֆոնդային մասը տարեսկզբին կազմում էր 160.014.300 դրամ*** **2020թ. բյուջետային տարում համայնքի բյուջեի ֆոնդային մասի մուտքեր կանխատեսվում են շուրջ 117 871 000 դրամի չափով: Համայնքի սեփականությունը հանդիսացող ֆոնդերի օտարումից (հողի օտարումից) և այլ նվիրատուներից: Ընդամենը ֆոնդային բյուջեի գումարը կանխատեսվում է՝** **277 885 300 դրամ, որից՝** 2.000.000 – Մեքենա սարքավորումների ձեռքբերման 14.000.000 – Նախագծահետազոտական աշխատանքների համար 144 014 300 – Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում **117 871 000 – Սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորում՝ որից** 50.000.000 – Կապտաժի և ջրագծի կառուցում՝ Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրում 67 871 000 - Ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգում	
Ծրագրի ընդհանուր բյուջեն	138.082.1 ՀՀ դրամ (100%)	
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	50.000.000 ՀՀ դրամ (36.2%)	
Այլ ներդրողներ	..... ՀՀ դրամ (.... %), նշել ներդրողի անունը:	
Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբը՝ 01.06.2020թ. Տևողությունը՝ 6 ամիս	
Ծրագրի ծախսերը	*ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով*	

	նախագծանախահաշվային փաստաթղթերը կցվում են :
Ամսաթիվ	27.04.2020թ.

Այլ տեղեկություններ ծրագրի մասին. (Նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

Համայնքի տնտեսական պատասխանատու Իրինա Յոլյան

Հեռախոս, էլ.Փոստ yolyan.irina@gmail.com, 055851110

Համայնքի ղեկավար Առուշ Առուշանյան